

# Օ Ա Զ Ի Ս

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԿԻՆԵԱՆՑԻ

ՄԵՆՔ գընում ենք... բայց դեռ մօտ չէ ցանկալի մեր հեռաստան.  
ՄԵՆՔ լոգնած ենք և ալրւած ենք, պապակւած ենք մենք սաստիկ.  
ՄԵՆՔ գընում ենք... բայց գըժւար է, աւազոտ է մեր ճամբան.  
Վալրենի է շըրջակալքը, ամալի է և լըռիկ:

Բայց այնտեղ, ուր մենք դիմում ենք թառանչով և անհամբեր,  
ՄԵՂ քարշում է, գըրաւում է դիւթական մի տեսարան.  
Բացւելու են մեր սըրտերը, փըշըւելու են շըզթաներ,  
ՈՐ կապել են, կտշկանդել են մեր թըռիչքըն առնական:

Անոլշ բոլըն ու զով հողմըն փըչելու են մեր դէմքին,  
Թարմ ծառերըն լըզելու են մեզ ողջոյնը սիրային,  
Կարկաջով էլ հոսելու են առւակները պաղպաջուն,  
Եւ իւր գիրկը բանալու է սիրեցեալ մեր բընութիւն:

Այն միրաժ չէ, որ քարշում է. օդումը չէ նա կանգնած.  
Ալլ օազ է—իրական է հըրապոլըն ալդ անուան:  
Տեսնելու ենք, ով Աստուած իմ, մեր աշխարհըն աւետեաց,  
Հասնելու են մեր ըղձերը և մեր ուխտը կատարման.  
Թէ կարօտը մեր սրտումը՝ լինելու ենք նահատակ,  
Եւ աւազ է ծածկելու մեզ, ողորմելի մեր դիակ: